

բուրդներ³⁹. Հարաչուք աղէտ մը կրեց Հրէից առաջին ապստամբութեան ատեն՝ Կեստիոս Գաղղոս նուիրակին հրամատարութեան ներքեւ⁴⁰: Նոյնպէս Գ Սկիւքականը՝ գրեթէ առաջին օրէն ալ՝ դառն հիասթափութիւններ պատճառած էր Պեղոսի բանակին մէջ⁴¹. սակայն լաւագոյն կեցուածք մ'ունեցաւ Կեստիոսի նահանջին ատեն 67ին⁴²: Ուստի Հոռմէական կառավարութիւնը բարեբաստիկ ներշնչում մ'ունեցած էր՝ Հայաստանի պատերազմին աւարտելէն ետքը⁴³, Արեւելքի զօրագունդներուն քանակը լիակատար պահելով. միայն Գ Գաղղիականը դարձեալ Միւսիա խաւրուած էր⁴⁴. բայց Մուկինիոսի անձնական նախանձախնդրութիւնն իւր նուիրակին դէմ՝ պատճառ եղաւ որ դարձեալ Ասորիք խաւրուի նոյնը 70ին⁴⁵:

Այս միջոցին կազմուած էր Կապադոզիակիա նահանգը (18ին)՝ գործակալի մը (procurator) ներքեւ, որուն օգնական պիտի ըլլար՝ Հարկաւորութեան դէպքին՝ Ասորիքի նուիրակն իւր զինուորական ուժովը⁴⁶: Վերջնոյս պարտականութիւններն երթալով ծանրաբեռն կ'ըլլային. ուստի Վեսպասիանոս թեթեւացուց, Կապադոզիակիոյ մէջ ալ ուրիշ նուիրակ մը դնելով: Այս նոր կուսակալը ժառանգեց ժե Ապոդիմարեան⁴⁷ լեզունն ու ժԲ Շանքահար միջակ գունդը, զոր Տիտոս՝ Երուսաղեմի առումէն ետքը, Ասորիքի մեղի բանակետերէն հեռացրնելու

համար⁴⁸, հաստատեց Մելիտինէի մէջ՝ ուսկից այնուհետեւ չհեռացաւ:

Պաղեստինը բաժնուած էր Ասորիքէն, եւ ընդունեցաւ ժ Նեղուցային լեզունը՝ որ Երուսաղէմ հաստատուեցաւ՝ յորջորջուելով այնուհետեւ Էլիա-Կապիտոլեան (Aelia Capitolina) անուամբ⁴⁹: Եւ սրպէս զի Ասորիքի պահակագործը չնուազի՝ յառաջ եկած պակասներուն տեղը լեցուեցաւ՝ նահանգին մէջ պահելով Գ Սկիւքական լեզունը եւ հոն մուծանելով ժԶ Փղաւեան Ամուր (XVI Flavia Firma) լեզունը, որ նոր կազմուած էր՝ ինչպէս կրնայ ըսուիլ՝ Գերմանիոյ ժԶ լեզունի (leg. XVI) կենդրոններէն, որ վերջինս միեւնոյն ժամանակ արձակուեցաւ⁵⁰: Կը մնար միայն Ե. Մակիդոնական լեզունին համար վերջնական դերք մը հողալ. արդ Ամմուսի (Եմմաուս Նիկոպոլիս) արձանագրութիւններն⁵¹ ա'յնպէս մը կրնային կարծել տալ թէ ժամանակ մ'այս տեղ բնակած ըլլայ⁵², բայց թերեւս լեզունը հոն միայն ջոկատ մը թողուցած էր՝ երբ Միւսիա կը վերադառնար⁵³:

Ասոր վրայ եկաւ Տրայանու ժամանակ Արարիա նահանգին կազմուելը. ասոր պահանջութիւնը յանձնուեցաւ միակ լեզունի մը՝ Գ Կիւրեանական, որ Երիզտոսէ կոչուեցաւ: Վերջապէս Հրէից յետին ապստամբութենէ ետքը՝ Հարկաւոր տեսնուեցաւ Յուդայաստանի մէջ յաւելուածոյ լեզուն մը. հոն փոխադրուեցաւ անտարակոյս Զ Երկաթին⁵⁴:

³⁹ Տակիտ., Տար. ԺԵ, 7, 10, 26:
⁴⁰ Յովս., Պ. Հ., Բ, 543 Եւն: Յետոյ ջանաց դուռը իւր քաջարութեամբ (Ե, 41 եւ 467) մաքրել այս բնօր, բայց ի զօր՝ ինչպէս վարը պիտի տեսնենք: ⁴¹ Տակիտ., Տար. ԺԵ, 7, 11 Եւն: parum habilis proelio videbatur (պատերազմի քիչ յաջողակ կ'երեւար): ⁴² Անդ, 17:
⁴³ Հմմտ. A. v. Domaszewski, Die Dislocation des röm. Heeres im Jahre 66 (Rhein. Museum, N. F. XLVII, 1892, p. 207—218).
⁴⁴ Մուկտինոս, Վեսպ. Գ Տակիտոս, Պատ. Բ, 74:
⁴⁵ Տակիտոս, Պատ. Գ, 36:
⁴⁶ Chapot, provincia, ի Բառագիրս Հնագիտութեան:
⁴⁷ Պարթեւաց պատերազմէն վերադարձաւ 63ին (Տակիտ., Տար. ԺԵ, 25): Գոնէ շատ հաւանական է թէ նոյն ինքն Վեսպասիանոս զանի կայանաւորից Կապադոզիակիոյ մէջ (Մուկտինոս, Վեսպ. 8՝ Cappadociae propter adsiduos barbarorum incursus legiones addidit, «Կապադոզիակիոյ» բարբարոսներուն անընձատ արշաւանաց պատճառաւ լեզուններ աւելցուց): Յիշեալ լեզունն այլ այս յօդակի «Լեզուններու» մէջ ըլլալու է: Մակիտոս ապահովապէս ժամանակ մը բնակեցաւ նաեւ Պանոնիա (Յովսեպ., Պ. Հ., Բ, 117). որմէ ետքը՝ անոր Կապադոզիակիա դառնալու ամենահին վկայութիւնն է Առիանու «Ճակատամարտութիւն ընդդէմ Ալանաց» գրքին մէջ եղածը. յաւել՝ CIL, VIII, 7079:

⁴⁸ Ամէն կողմանէ անուամբ՝ Πατιάσασιν ἐξήλασεν, կ'ըսէ Յովսեպոս (Պ. Հ., Բ, 18):
⁴⁹ Յովսեպ., Է, 17. Դիոն Կաս., ԾԵ, 23: Ասոր Զօրանտի հաւանական տեղոյ մասին հմմտ. Wilson, Palestine Exploration Found, 1905, p. 231—232:
⁵⁰ Դիոն Կաս., ԾԵ, 24:
⁵¹ Հմմտ. CIL, III, 6647:
⁵² Clermont-Ganneau, Archaeological Researches in Palestine, London, I, 1899, p. 468. Բնական էր որ այս երկրի մէջ, ուր Հոռմ այնպիսի զարհուրելի ոստիներ դրած էր, նախագրուութեան համար առժամանակեայ պահուած ըլլան երկու զօրահանգները՝ որոնք լաւագոյն համարու ունէին (Յովս., Պ. Հ., Գ, 65 ἦν δὲ τὰ ἐπισημώτατα τὸ πείρατον καὶ τὸ δόξατον — այս թրդ. էջ 221 «որք էին աղնուակներ» հիմնադրող եւ տասներորդ» են:
⁵³ Mommsen, Eph. epigr., V, p. 620.
⁵⁴ Բազմաթիւ ենթադրութիւններ կ'ըստ են այս լեզունին ընդհանուր բնազդին մասին՝ Լաւոզիկէն թողլէն ետքը, այդ լրման ժամանակն ալ անձանթ է: Մտածած են թէ Հոռմին ըլլալու է, ուր գտնուած է (R. Dussaud, ի Rev. archéol. 1897, I, p. 318) արձանագրութիւն որ կը յիշէ Սեւերոս արքրուն մը, բայց մանաւանդ ասիէ Հաղի քաղաքը ժամ հետեւ կը գտնուէր լեռ մը Փրանկաց Mons Ferrandus, որուն յորջորջանքը թերեւս ծագած ըլլայ Ferrandus:

Այսպիսով Ադրիանոսէ սկսեալ եւ շատ երկայն ժամանակաշրջանի մը համար կրնանք յաջորդ ցուցակը ծրագրել:

Ասորիքի մէջ՝ Գ Գաղղիականը, կայանաւորած ի Հոռմինէ Պաղղմեայ ժամանակ⁵⁵. նոյնը Փիւնիկէ բանակած կը տեսնենք Մարկ Աւրելիոսի ժամանակ եւ անկէ ետքն ալ⁵⁶. — Գ Սկիւքականը՝ որուն զօրանիստ տեղն անորոշ կը մնայ, բայց որ անտարակոյս միշտ նահանգին հիւսիսակողմը մնաց⁵⁷. — Եւ ժԶ Փղաւեան Ամուր լեզունը⁵⁸:

Եւ: Այն ատեն լեզունը ժառանգած ըլլալու էր ժԲ Շանքահար լեզունի կայանները. Ritterling ալ դիմած է անուակոչութեան օգնութեան՝ բայց կարծեմ թէ աւելի յաջողութեամբ (ի Rhein. Mus. N. F., LVIII, 1903, p. 633—635): Գալիլէի Ledjoun տեղն (ինչպէս համանունն ի Մովար եւ Léon ի Սպանիա) յառաջ կու գայ լեզուն (legio) բառէն, եւ այն տեղ բանակաւորներն կ'ըստ ըլլալու է Զ Երկաթի լեզունին Ա դարուն մէջ. յետոյ նախնական Կապադոզիոսն անունը (CIL, III, 6814, 6816) կ'երեւայ վերստին Պաղեստինեան Տակտակին վրայ՝ Կեսարիայի եւ Սկիւքոպոլոսի մէջտեղ: Մոմսէն (CIL, III, 6641) կը մտածէր աւելի Բատանիայի մօտերը տեղ մը՝ երկու արձանագրութեանց պատճառաւ (մէկը 208 տարեէն՝ CIL, VI, 210. յաւել՝ X, 532) որոնք կապ ունին ընդ Կապադոզիայի եղող զինուորներու հետ: — Կարելի է թէ այս տարբեր կարծիքներն իրարու հետ համաձայնին՝ զանազանելով թուականութեան ժամանակակիցը: — Եթէ վասիկանի աղիւս (laterculus) ինդիքը անորոշ կը թողու՝ նոյնը մասամբ կը լուծէ ընդհակառակն արձանագրութիւնն, որուն ժամանակը դժբախտաբար անձանթ է, որ հրատարակուած է ի CIL, IX, 5362: . . . trib. leg. VI Ferr. in Syria [P]alaestina (արքրուն լեզունի Զ Երկաթի յասորիս Պաղեստինացոյ): Պաղեստինի վերակազմութիւնը Ադրիանու ձեռք ընտրովին անմասն ըլլալու չէր այս փոփոխութեանց մէջ ինչպէս Կոնստանտին (Rohden, De Palestina et Arabia Romanis provinciis, Berolimi 1885, p. 31): ⁵⁵ Պաղղմ., Աշխ. Ե, 14, 12: Παφραναί, λεγόμεν τριτή Ζαφρανά, լեզուն Գ.): ⁵⁶ Տիւրոսի դրամներ՝ Վաղերիանու պատկերով (Մետե, Ե, էջ 449, Թիւ 738). CIG, 4544, 4548, 4571. Դիոն Կաս., ԾԵ, 23: Լեզունն թերեւս ջոկատ մը թողուցած էր ի Կիւրա, ուր օրինակած եմ հետեւեալ արձանագրութիւնը (BCH, XXVI, 1902, p. 185, Nr. 29): Μ(άρον) Δικρίτιον (Π)όξιλον (ἐκατόνταρον) λεγ(εῶνος) (Γ) Γαλιλαίης Ἰουλίᾳ Γαίου θουγάτηρ Σεουήρα τὸν ἴδιον ἄνδρα (Մարկոս Լիկիանոս Պրոկոսոս Հարիւրապետ Գ Գաղղիական լեզունի՝ Յուլիա Գայիոսի դուստր իւր անն Սեւերոսի համար): Արձանագրութիւնը՝ հնագրութեան եւ Սեւերոս անունն նայելով՝ Գ դարէն ըլլալու է, եւ անտարակոյս՝ որովհետեւ լեզունն անունը մը ճահար եղծուած չէ, Արեւիկանոսէ յետագոյն (կամ Հելիոգաբաղոսէ կանխապէս, ենթադրելով մոտացութիւն մը): ⁵⁷ Գուճարտակ մը (vexillatio) Անտոնինոսի Պրոսի ատեն կ'աշխատէր Սելեւիկի Պիլերիայի մեծ ջրանցքին. հմմտ. BCH, անդ, էջ 165, Թիւ 5, եւ էջ 166 — Վազգրիզարն՝ 2714:
⁵⁸ Վազգրիզարն (ի թիւն 2071) կը կարծէ թէ ասոր տեսական բանակաւորը՝ Մարկոս Աւրելիոսի ատեն ըլլալու էր Գաճառակոսի ջրջակայքը, ինչպէս նաեւ Գ Գաղղիականին (որ սխալ մըն է՝ ինչպէս տեսանք), «որովհետեւ այս ժամանակ երկու լեզուններն միաժամանակեայ կամ փոխ ի փոխ ջոկատներ կը խաւրեն փեխայի կարեւոր պահակաւորին պահպանու-

Պաղեստինի մէջ՝ ժ Նեղուցային (Փրիտական) լեզունը, Երուսաղեմի մէջ. — Եւ Զ Երկաթին, որուն բանակաւորն անորոշ է: Արաբիայ մէջ՝ Գ Կիւրեանական լեզունը, ի Բոստրա:

Կապադոզիակիոյ մէջ՝ ժԲ Շանքահար լեզունը՝ ի Մելիտինէ. — Եւ ժԵ Ապոդիմարեանը՝ ի Սատաղա⁵⁹:

(Շարունակելի:)

ԲԱՐՉՐ ՀԱՅՔԻ ՎԱՆՔԵՐԸ
 (Շարունակութիւն:)
 21. ՃԼԵՄՈՆԻ ՎԱՆՔԸ

Եկեղեցայ դաւառին մէջ: Արդեօք կրնա՞յ նոյն ըլլալ Հերմոնի վանքին հետ (հմմտ. Հերմոնի վանքը):

Այս վանքը ծանօթ է զոյգ յիշատակագրութենէ: Մին ստուած Մրուանձտեանցի «Պորոս Ադար» գրքին Բ. հատորին մէջ (էջ 329), իսկ երկրորդն անտիպ: Առաջինին մէջ կ'ըսուի. «Աստուած աւրհնէ զրոպիս Սանապետն եւ զիւր որդին զՋանազիզն. որ երես զՄուրատին սագն Սաչերեսին տուած արտոմը յիշատակ ձեւիմոնի վանուցն Ս. Աստուածածնին եւ Ս. Ստեփաննոսին եւ Ս. Լուսաւորչին եւ Ս. Աւգստինոսին եւ Ս. Սարգսին. յիշատակ Սանապետին...»:

Երկրորդ յիշատակագրութիւնը շատ կարեւոր է. «Ի շրջագայութեան ժամանակաց յամի եւթն հարիւրերորդի Զէ Հայոց թուականի, ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Աւշնի եւ ի հայրապետութեան Տեառն Յակոբայ եւ յալիսկոպոսութեան մեկոյ տէր Սարգսի: Գրեցաւ Դ. գլուխ Աւետարանաց...: Արդ ստացաւ կղեն սուրբ Աւետարանի Մարխաթուն հաւատալորն ի

թեան համար, որ կեցած էր այն կէտին վրայ՝ ուր հոռմեական ճամբան կը մտնէր Տրաքսիսիա գաւառը»: Բայց եւ Շամշատ գտած եմ աղիւս մը՝ որ նշանադրուած կը կրէ՝ Leg. XVI Fl. (տես BCH, անդ, էջ 203, Թիւ 56). եւ ճիշդ Բ. դարու կէսին Պաղղմէոս (Ե, 14, 8) կը գրէր՝ Ζαυδοαυα λεγ. ων Φλιουσία (Շամշատ՝ Լեզուն Փղաւեան): Ասի միեւնոյն ըլլալու է:
⁵⁹ Աւգիւր. Անտոնին. 183, 5:

հարսնայ դուստր Մուրվարի եւ Հերթիկն ի Կեռսէնուտէն որդի Վահրմին, որ են այժմ ի գեղս, որ կոչի Սարաթուշ²² եւ եղին զսա յիշատակ իւրեանց եւ իւրեանց ծնաւդաց ի գեղս որ կոչի Սարաթուշ ի մեծ եւ ի հուշա- կաւոր եկեղեցիս, որ յանուն սուրբ Աստուա- ծածնին: Արդ... յիշեալիք զստացաւդս սո- րա զՀերթիկ ժամակոչն եւ զծնաւդան իւր զհայրն իւր զՎահրամ եւ զմայրն իւր զՇու- շան տիկին եւ զՄարթաթուշն հաւատփորն եւ զծնաւդան իւր զհայրն իւր զՄուրվարի եւ զմայրն իւր զՍովհեր...: Ընդ նմին եւ յի- շեալիք եւ զիս գրագմամեղ զգրողս զՅովան- նէս եւ զծնաւդան իմ զՄարտիրոս հիւսն եւ զմայրն իմ զՄեծ տիկին զփոխեցեալսն ի Քրիստոս եւ զմիւս մայրս իմ հոգեւոր զՇա- միրամ: Արդ գրեցաւ սա յԵկեղեց գաւառս ի յԵկեղայս եւ վասն դառնութեան ժամանա- կիս ի հինգ տեղիս փոխեցեալ եղաք ի գրել սորա, զի (սկիզբն) սորա ի Տի(ա^o)րին եղեւ եւ աւարտուին սորա ի ձիմոնիս ընդ հովա- նեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գէոր- գա զաւրաւարին եւ սուրբ կաթողիկէիս եւ այլ սրբոցս: Եւ արդ յիշեալիք եւ զեղբայրն իմ զգեղարոյս արեղայ զՄարգիս, որ զթուղթս կոկեց եւ սպասաւոր էր գրողիս: Ընդ նմին յիշեալիք եւ զհայր վանիցս ձի- մոնոյս զԳրիգորէս արեղա եւ զայլ միա- բանքս, զՍոսթենէս ճերուհի արեղա եւ զՍէթ արեղա եւ զՅովաննէս արեղա, զԿարապետ արեղա եւ զՄարգիս արեղա եւ զՅովաննէս սուտանուն արեղա զգող սորա: Եւ արդ յի- շեալիք եւ զքահանայս զգեղ Սարաթուշ՝ զՅովաննէս քահանայ եւ զԴաւիթ քահանայ եւ զՆերսէս քահանայ եւ զՍտեփանոս քահա- նայ եւ զաւաք տանուտէրքս՝ զՍողոմոն եւ զՖէրն եւ զայլ պողի(°) զմեծ եւ զփոքր... ամէն: ... (Սոչոր)ութեան գրոցս եւ (սխա- լա)նաց մի մեղագրէք, զի ի դառն եւ ի նեղ ժամանակի գրեցաւ, զի յայտ ամի(ն) որ Տամուրտաշն յայտնեցաւ եւ եկն ի վերայ աստուածապահ քաղաքիս Երզնայիս եւ ժո- գովեց զամենայն շուրջակայիցս զՔուրթ եւ զԹաթար եւ պաշարեաց զքաղաքս եւ նստաւ ի վերայ սորա ամիսս Գ. եւ ի դառն նեղու- թիւն հասոյց, բայց քաղաքին ոչինչ կարաց փասել, զի Աստուծոյ զօրութիւնն պահէր գնա: Ապա զերկիրս խիստ դառն ||||| ի սուր սուսերի մաշեց եւ զոմանց զինչ եւ

²² Սարաթուշ կամ Ղարաթուշ գիւղի մասին համա. Սիւրմէնեան, Երզնկա, էջ 84:

զստացուածս յափշտակեց եւ ոմանք փա- խեան ||||| ի ճիւն եւ ի սառն մեռան, զի ձմերային էր ժամանակն, զի որ ի տան բնա- կէր ի ձեռս նոցա մատնէր եւ որ փախէր ի ցրտոյ տոչորէր եւ ի յետին շունչն հասաւ երկիրս այս, եւ իմ լսէի եւ տեսնէի զայս եւ ի բազում տրտմութենէ ոչ կարէի գրել զգիրս... (լուսանցքի վրայ) «Եւ զԿիրակոս միակեցն յիշեցէք, որ զգրողիս մուշտակն կարեց» (Ակինեան, Հաւաք. Յեշատ. Չեռ. Երեւան, Թ. 102):

22. ՄԻԱԽՈՐ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

«Եւ կայ ի վերայ ճանապարհին (Երզն- կայի) վանք մի հուշակաւոր Միաւոր Ս. Կա- րապետ անուն առ ստորոտով լերին մեծի, որ Չարտախու կոչեն, որ գնացեալ սինոն հասանէ մինչեւ ի Շեպ Ղարահիսարն, որ է Կողոնկայ» (Յակ. Կարնեցի, Տեղ. Վեր. Հայոց, էջ 12). կամ ուրիշ սահմանագծու- մով. «Միաւոր Ս. Կարապետի վանքը կա- ուցուած է Երզնկայէն երեք ժամ հեռու Աշ- տաղի ստորոտը, Եալընը պող գիւղի մերձ» (Բիւզանդիոն, 1897, Թ. 317. Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 158. Արեւելք, 1884, Թ. 96. անդ, 1889, Թ. 1648 եւ Սիւր- մէնեան, Երզնկա, էջ 98): «Շինուածքն հնացեալ ու խարխալեալ, տաճարը թէեւ բարձրադիր ու ընդարձակ, այլ կիսաւեր» (Արեւելք. Մամուլ, 1887, էջ 52. Ղազանճեան, Սառն նամակներ, էջ 23—24): Ս. Կարա- պետի վանքը՝ «առ հասարակ կործանեցաւ ի վերջին երկրաշարժութեան» Երզնկայի (Ին- ճիճեան, Նոր Հայաստան, էջ 100):

Աւանդութեան համեմատ այս վանքին հիմնադիրն է Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որ զայն Ս. Կարապետի նուիրական մասունքնե- րով կ'օժտէ (Բիւզանդիոն, 1902, Թ. 1614): Աւերումի ենթարկուած եւ ցանցառ նորո- գութիւն տեսած: Նաեւ ունեցած է ուխտ- ւորներու հովանոց, սենեակ, ախոս, մարագ ու բաւական հարստութիւն. բայց անկէ՛ եւս զրկուած (Արեւելք. Մամուլ, 1887, էջ 52. Արեւելք, 1889, Թ. 1648. Բիւզանդիոն, 1902, Թ. 1614): Անցած է աշխարհականնե- րու՝ Թորոսեան ընտանիքի ձեռքը (Լուսա- րարեան Կ. Վ., Գաւազանագիրք Մշոյ Ս. Կա- րապետի, Երուսաղէմ 1912, էջ 139 եւ Սիւր- մէնեան Գ., Երզնկա, էջ 98):

23. Ս. ՄԻՆԱՍԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի արեւմտեան կողմը, Կապուի վանքի մօտերը, Սեպուհի շուքին տակ, ար- դէն շատոնց շարաթացած: Երբեմն եղած է Յովհաննէս Երզնկացիի բնակավայրն ու աշ- խատավայրը: Նա հաւանականաբար հոն ալ իր շինարար ձեռքը ցուցուցած ըլլայ (Բիւ- զանդիոն, 1898, Թ. 351, 1902, 1644. Արեւելք. Մամուլ, 1890, էջ 77. Ղազանճեան, Սառն նամակներ, էջ 24. Ալիշան, Հայա- պատում, Գ., 77. Գր. Դարանաղցի, Ժամա- նակագրութիւն, էջ 305, 399—401. Պալեան, Յուց. հայ. Չեռ. Ս. Կարապետի վանուց ի Կեսարիա, Թ. 35. Բագմ. 1906, էջ 256 եւ Սիւրմէնեան, Երզնկա, էջ 20):

24. ՆԱՆԳԻ ՎԱՆՔ

Երզնկայի Ս. Օղսենդի վանքի մօտերը կայ արտ մը, որ Նանդի վանք կոչուած է եւ մարդ կը միտի ենթադրելու, թէ դուցէ հոն կրբեմն հայկական վանք մը բարձրացած ըլ- լայ (Բիւզանդիոն, 1902, Թ. 1644):

25. Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՎԱՆՔԸ

Երզնկային չորս-հիգ ժամ հեռու, անոր արեւելեան կողմը, Քէչիչ եւ Սարը-դայա լեռներու ստորոտը, Բթառիճ գիւղի մօտ, բարձր դիրքի վրայ կառուցուած է Ս. Նիկո- ղայոսի վանքը²³ որ ստուգիւ օժտուած է ան- նման տեսարաններով եւ առողջարար կլի- մայով (Բիւզանդիոն, 1897, Թ. 317. Ինճի- ճեան, Նոր Հայաստան, էջ 100. Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 158. Սրուանձ- տեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 49. Արեւելք, 1884, Թ. 96. 1901, Թ. 1538. Մասիս, 1886, Թ. 3841. Յառաջ, 1911, Թ. 79 եւ Սիւրմէ- նեան, Երզնկա, էջ 99): Թէեւ «Արեւելեան Մամուլ»ի յօդուածադիրն անոր տաճարը տձեւ կը գտնէ եւ հին (1887, էջ 379—380, 435) ու Պալեան հաւանականաբար անոր զրութեան վրայ յենով զայն չի հաւնիր (Բիւզ. 1901, Թ. 1538), սակայն Արշաւիրի նկարագրութեան համեմատ թէ վանքը եւ

²³ Ս. Նիկողայոսի հարաւակողմն է՝ Բթառիճ, արեւելեան կողմը՝ Քէչիչիճ կամ Քալարիճ եւ արեւ- մտեան դին ձիմին գիւղը (Արեւելք. Մամուլ, 1887, էջ 379): — Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Ննջումն երանելոյս (Յովանափի) Երզնկայ յԱպահու- նեայ վանքն եղև, որ այժմ Բթառիճի վանք անի» (Ակինեան, Հաւաք. Յեշատ. էջմ., 1661):

թէ եկեղեցին արժանի են որոշ, այլ ոչ չա- փազանցուած դնահատութեան: Նա կը գրէ՝ «Վանքը ներքնապէս թէպէտ պարզ կ'երեւայ, բայց հին ճարտարարուեստի գլուխ գործոց- ներ կը ցուցադրէ իր զանազան մասերուն մէջ...: Կայ նաեւ զեղաշէն եկեղեցի մը եւ յարակից պարտէզ մը, որոնք ամէնքը միա- սին շրջապատուած են բարձրադիր եւ հաս- տատուն հողապատնէշներով. ունի մէկ ար- տաքին դուռ՝ հաստ եւ ձեծուած երկաթնե- րով շինուած, զոր գոցելու եւ բանալու հա- մար հարկ է որ երեք չորս վանականներ քովէ քով գան եւ գործածեն փայտէ ձողեր: Այս դուռը ունի նաեւ ահազին նիւափակ մը, որ երեք չորս բանալիով կը գոցուի...: Վանքին ներսը ամէնէն աւելի եկեղեցին է որ աչքի կը զարնէ, որուն մօտէն կարելի է գննել իր զեղարուեստական նրբութիւնները: Գմբէթն արտաքին երեւոյթով ճիշդ էջմիած- նայ կաթողիկէին կը նմանի: Չանգակատունը զետեղուած է տանիքին ամէնէն վերը դրան ուղղութեամբ, որ իւր գլուխն անցուցած է վանքին խաչը եւ իր մէջէն կախուած ծան- րածոյլ զանգակը...: Եկեղեցիին ներսը ալ աւելի սքանչելի է եւ ճարտարարուեստի գլուխ գործոց մը կը ներկայացնէ: Խորան- ները նախնի ճարտարարուեստին ամէն նըր- րութիւնները կը ներկայացնեն իրենց զեղա- կերտ եւ նրբահիւս քանդակ-հանգոյցները մարդուս խելքէն գերիվեր կը թուին, որոնց վրայ տաշուած եւ իրենց բնական գոյներով նկարուած նրբերանգ ծաղիկները զերենք դործող արուեստագէտին ճարտարութիւնը կը ներկայացնեն» (Մասիս, 1906, էջ 334):

Ս. Նիկողայոսի վանքի հիմնարկութեան եւ անոր միարաններու գործունէութեան պարագաները կը մնան անձանթ: Հոն ժա- մանակ մը բնակած է Մկրտիչ տաղասաց վարդապետը (Գր. Դարանաղցի, Ժամանա- կագրութիւն, էջ 405): Լաւ վանահայր եղած է Գարրիէլ քհ. ա. Մարութեան (Արեւելք. Մամուլ, 1887, էջ 380): Հին վանք եղած կը թուի²⁴: Եղած է սիրուած ուխտատեղի: Ունեցած է թեմական գիւղեր — Բթառիճ, Ղարաքիլիսէ, Աղճա-Քենդ, Խնձորիկ, Շըխլի — եւ հողեր, զորոնք վանքին երկու վանա-

²⁴ Կրկնութենէ խոյս տալու համար բանք որ Ս. Ներսէսի, Ս. Գէորգի, Չարչարանաց, Ս. Նիկո- ղայոսի, Ս. Աստուածածնի, Ս. Նշանի վանքերը կ'այ- ցելէ Գր. Օշականցի (Ոսկեան, Մայր Յուցակ, Բ., Թ. 884. անտիպ թղ. 31ա—41ա):

հայրերն իրարու մէջ կը բաժնեն (Բիւզանդիոն, 1897, Թ. 317. Արեւել. Մամուլ, 1887, էջ 380. Հմմտ. եւ Փոռնո, 1881, Թ. 1623 եւ Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 99 եւ 221):

26. ՇՈՂԱԿԱԹ Ս. ԱՍՏՈՒԱՇԱՇՆԻ ԿԱՄ ՇՈՒՅՑ ՎԱՆՔԸ

Երզնկայի արեւմտեան կողմը եւ անկէ երկու ժամ հեռու, Սեպուհ լեռան ստորոտը Շոխայ²⁵ թրքաբնակ գիւղի մօտերը մեծ ու խոր ձորի մը կողքին: Պարսպապատ: Տաճարը շինուած քարուկիրով եւ կամարակապ: Նորոգուած՝ 1684ին Աւետիք Եւզովիացիէ (յետոյ պատրիարք): Կանխաւ հիմնուած Ս. Թադէոսէ եւ վերաշինուած Ս. Ներսէս Պարթեւէն — աւանդութեան համեմատ: Հոս է որ Առաքել Ակնցին Սերաստիայի առաջնորդ կ'ընտրուէր եւ նա անկէ հեռանալէն յառաջ՝ «յանձնեաց զվանքն առաջի առաջնորդին եւ իշխանացն բազում անօթովք, զգետաւիք եւ յորովք անասնովք թարց պարտուց աշակերտին իւրոյ տէր Յօհան Երիցուն» (Դիւան, Ժ., էջ 408—409): Գուցէ այս վանքին կը հային Գր. Դարանաղցիին խօսքերը. «Ի գլուխ ձորոյ քաղաքին մէկ վանք մի կայ ամենալի պողովք եւ ամենայն պիտոյիք լի՝ յանուն սուրբ Աստուածածնին, մեր անդեան տեղի» (Ժամանակագրութիւն, էջ 156):

Ունեցած է այգի, գրեթէ 50 արտավար մշակելի հող եւ վիմափոր սենեակներ (Բիւզանդիոն, 1902, Թ. 1614, 1897, Թ. 317. Արեւելք, 1884, Թ. 96. Նաթանեան, Արտօսը Հայաստ., 158. Յառաջ, 1911, Թ. 79. Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 96—97 եւ Արեւել. Մամուլ, 1889, էջ 176, եւ անդ, 1884, էջ 189):

27. ՉԱԳՐՄԱՆԻ Ս. ՊՕՂՈՍ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔԸ

Չագրման կամ Չախրման գիւղի մերձ, Բէշեշ տաղի կողերէն մէկուն վրայ, հսկայ գահավէժի մը գլխուն, սարակարկառի մը փոսին մէջ, Երզնկայի արեւելեան հիւսիսային կողմը կառուցուած է Պօղոս — Պետրոս վանքը: Եկեղեցին քարաշէն է եւ փոքր: Օժտուած է առողջ օդով, համեզ ու պաղ ջրով եւ գեղեցիկ դերքով: Տառեան գեր-

²⁵ Կը կարծուի թէ Շոխայ կանխաւ եղած ըլլայ Շողայ եւ անկէ Շողակաթ (կամ հակառակէն): Գրեթէ սաղոյ կը համարուի թէ՛ Շողակաթի եւ Իշողի վանքերը միեւնոյնն ըլլան (Հմմտ. վերը):

դաստանը սոյն վանքս իր խնամքին տակ առած եւ զայն նորոգած է: Ունեցած է անշարժ կալուածներ (Բիւզանդիոն, 1898, Թ. 351, 1901, Թ. 1538. Արեւելք, 1884, Թ. 96 եւ 1895, Թ. 3362. Արեւելեան Մամուլ, 188, էջ 380. Նաթանեան, Արտօսը Հայաստանի, էջ 158. Ղազանճեան Սառն Նամակներ, էջ 22—23. Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 99):

Ամատեան Չախրման կը համարի Չարխափանի աղաւաղումը (Արեւել. Մամուլ, 1887, էջ 52—53) Չախրման ունեցած է Չարխափան Ս. Աստուածածին Եկեղեցի մը, Հմմտ. Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 75 եւ աստ վերը Ս. Աստուածածնի վանքը ի Չախրման:

28. ՉԱՐՉԱՐԱՆԱՅ ԿԱՄ ՏԱՏԱՍԿԻ ԿԱՄ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՄ ՆԱՆԻ ՄԵՐՃԱՆԻ ՎԱՆՔԸ

«Երզնկայի վանքերուն ամենամեծը եւ ամենահինն էր այս վանքը, որ կը գտնուէր Տուժիկ լեռներու ստորոտը: Բովէն կ'անցնէր Մէրջան գետին մէկ ճիւղը, ատոր համար ալ Բիւրտերը Մէրջանց վանք կը կոչէին զայն: Այս վանքը գետի ձախ կողմը գտնուած վանքերուն ամենահեռաւորն էր, քաղաքէն 4—5 ժամ կը քաշէր: Շինուած էր հարթ ու տափարակ դաշտագետնի մը վրայ: Հողաղիւսէ բարձր, թանձր ու հաստատուն պարիսպներու մէջ առնուած էր վանքը, որ կը բովանդակէր վանականներու բնակութեան համար տուն, խոհանոց, ճաշարան, մառան, իսկ կենդանիներու համար՝ ախոռ, գոմ, մարագ, մեղուանոց եւ այլն: Շէնքին հարաւային մասին վրայ կառուցուած էր եկեղեցին, գեղեցիկ-մատուռ տաճարիկ մը, որուն մէջ կը գտնուէր՝ Գրիգոր Լուսաւորչի աջը, արծաթապատ ու ոսկեզօծ, ինչպէս նաեւ երկաթեայ փոքր տաստակներ, որոնց վրայ — ըստ Ազաթանգեղոսի — դրած ու չարչարաց են Սուրբը եւ որոնց ճիշտ տեղը շինուած է այս վանքը, այդ պատճառով կոչուած է Տաստակի վանք: Ասոնցմէ գատ վանքը ունէր շատ մը սուրբերու նշխարներ, մագաղաթեայ սուրբ Գիրքեր եւ այլն: Ասոնք պահուած կը մնային մասնաւոր թաքստոցի մը մէջ ու միայն հանդիսաւոր տօնական օրերուն, յատուկ արարողութեամբ դուրս կը հանուէին՝ բարեպաշտ հաւատացեալներուն ցուցադրուելու համար:

Շէնքին հարաւային անկիւններուն վրայ կային կարգ մը սենեակներ, իսկ հիւսիսային անկիւններուն վրայ շինուած էին դիտարաններ, թշնամին հեռուէն տեսնելու եւ կանխապատրաստուելու համար:

Վանքին մէջտեղը ընդարձակ քառակուսի բակ մը կար, մէջը՝ աղբիւր, աւազան ու ձեմեղափայր:

Վանքին մուտքին առջեւ կը տարածուէր ընդարձակ մարգագետին մը հսկայ թթենիներով հովանաւորուած: Մեծ եւ քարքարուտ ձոր մը վանքը կը գատէր հանդիպակաց լեռնաշարի դարաւանդէն, ուր կը գտնուէր բաւական վարելահող: Այդ հողերը վանքին կը պատկանէին եւ Չոչկանց կը կոչուէին» (Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 94—95):

Քարաշէն եւ հին տաճարը Ս. Գրիգորի նուիրուած է եւ ասկէ առած է նաեւ Փոքր Լուսաւորչի վանք անունը: Ունի նմանապէս խորվիրապ մը կամ Ս. Գրիգորի բանտ մը:

Անոր թեմական գիւղերէն են՝ Մեղուցիկ, Ղարաթուշ, Ագրակ եւ ձանձիկէ, իսկ վերջին շրջաններու վանահայրերէն կ'արժէ յիշել՝ տէր Պօղոս եւ տէր Ղեւոնդ (Հմմտ. այս վանքի մասին Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 94—96, Բիւզանդիոն, 1897, Թ. 317, 1900, Թ. 1060, 1901, Թ. 1411 եւ 1538. Հայրենիք, 1894, Թ. 743. Արեւել. Մամուլ, 1884, էջ 190, 1887, էջ 380—383, էջ 437, 1894, էջ 763, 1895, էջ 764 եւ 1899, էջ 1046—1048. Արարատ, 1896, էջ 88. Արեւելք, 1884, Թ. 75 եւ 96, 1895, Թ. 3415. Յառաջ, 1911, Թ. 79. Ղազանճեան, Սառն Նամակներ, էջ 25—26. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 100. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 49 եւ Բիւրակն, 1898, էջ 648—650):

29. ՍԱՂԻ Ս. ԱՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Հետեւեալ յիշատակագրութիւնն այս վանքին անունը մեզի բերած է. «Արդ գրեցաւ... ձեռամբ Սամուէլի... գրչի ի գաւառիս Եկեղեցայ ի սուրբ ուխտս որ կոչի Սաղի սուրբ Ստեփաննոս ընդ հովանեաւ սուրբ Նախավկայիս... հրամանաւ Մարգարէի աստուածասիրի առաջնորդի անապատիս, ծախիւք եւ արգեամբք Ոնոփրիոսի աւաք սարկաւազի եւ Պետրոսի կուսակրօն արեղի եւ Յակոբ կրանաւորի...: Արդ գրեցաւ սա ի

թուականիս Հայոց ի ՊԿԲ (1413) ի հայրապետութեան տեսնն տէր Գրիգորի արքեպիսկոպոսի...: Արդ (յիշեցէք)... զստացող տառիս զՈնոփրիոս աւաք սարկաւազն զվայր (հայր) վանացս, որ եղ ի դուռն սուրբ Կարապետիս յիշատակ անջլինջ...: Արդ... յիշեցէք յաղօթս ձեր զհայր Ոնոփրոս եւ զեղբայրն իւր զՏիրատուր արեղան եւ զհայրն իւր զԻսաիթ զհանգուցեալսն ի Քրիստոս եւ զմայրն իւր զՍիմայն... յիշեցէք եւ զՊետրոս արեղան, որ աւգնական եղեւ ի գրոցս գրեկն ԳՃ դրամ...: Յիշեցէք եւ զՅակոբ արեղան զփակակալն... ընդ նմին յիշեալիք... զառաջնորդ սուրբ անապատիս զսուրբ Ստեփաննոս Նախավկայիս զհայր Մարգարէ, որ բազում երախտիք ունի առ մեզ եւ յորդորեաց ի բանս յայմիկ եւ հանգոյց... եւ զամենայն եղբայրութիւնս առ հասարակ: զՅովհաննէս կրանաւորն՝ զհոգեւոր հայրն մեր, որ բազում աշխատութեամբ սնոյց եւ ուսոյց զիս եւ նա եղեւ պատճառ այմիկ եւ զաւրինակն շնորհեաց եւ զծնաւալսն... եւ զբուրորդիսն Շահրիարն որ զգիրքս զլիսագրեաց եւ զԿարապետն...»: Ապա յիշել կը մաղթուի Մատթէոս արեղայ, Առաքել արեղայ, Պօղոս արեղայ՝ փակակալ, Սամուէլ արեղայ՝ զրիչ եւ Պետրոս արեղայ (Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 1317. Սարգիսգիրք, Հմմտ. Կարենեան, Յուլ. հայ. Ձեռ. էջմ., Թ. 1349):

30. ՏԻՐԱՇԵՆ ԿԱՄ Ս. ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Այս վանքը կը գտնուի Երզնկայի հարաւային կողմը, «Երկու ժամ հեռու, վեհապանձ Անձուրի ստորոտը, մեծկակ ձորի մը կողքին, զառիվար սարահարթի մը վրայ, հաստատահիմ ու բարձր պարիսպներով շրջապատուած»: Ան ունէր համակ սրբատաշ գորշագոյն քարերով կառուցուած կաթողիկէ եկեղեցի մը, մեծ ու փոքր զմբէթներով: Բուն տաճարը կը գտնուէր խորը, ներքին մասին մէջ, բոլորովին զատուած արտաքին մասէն: Մուտքի աջ կողմը կար մեծ աւանդատուն մը՝ իբր պահարան եկեղեցական սպասներու եւ հանդերձեղէններու, հոն կար նաեւ տաճարիկ մը եւ աւազան մը մկրտութիւններու համար: Տաճարին ներքեւ կը գտնուէր ստորերկրեայ նկուղ մը, որուն մէջ կը պահուէին թանկագին անօթներ ու հնու-

թիւները²⁶: Պատերը զարդարուած էին հին սրբազան իւզաներկերով, մոմլաթի վրայ գծուած, որոնց մէջ նշանակելի էր Սրբոյն Ներսէսի մեծազիր պատկերը, որ դրուած էր աւագ սեղանին մէջտեղը, ինչպէս նաև փորուած յիշատակարան քար մը, պատերէն մէկուն մէջ գետեղուած: Տաճարին մէջ պահուած կը մնային Սուրբին եւ ուրիշներու մասունքները» (Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 92):

Վանքը ունի բակ, հիւրանոց, ուխտաւորներու համար բնակարաններ, ախոռ ու գոմ (Արեւել. Մամուլ, 1888, էջ 49—50):

Սրուանձտեանց կը գրէ. «Ս. Ներսէսի վանքն ալ, շիրիմն ալ անշուք էր» (Թորոս Աղբար, էջ 50), մինչ երբեմն՝ «հոգևանուն եւ գեղեցկաչէն» (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 16 կամ՝ Սոփերք, է., էջ 64):

Ս. Ներսէսի կամ Տիրաչէնի վանքի հնութիւններէն են՝ «ժամատան փայտեայ զարմանազործ դուռն, որ ունի ճարտարաչէն քանդակներ, կրօնական նկարուց փորագրութիւն եւ երկաթագիր դժուարալոյծ արձանագրութիւն» (Արեւել. Մամուլ, 1888, էջ 51), դարձեալ Ս. Ներսէսի եւ Ս. Խաչափայտի մասունքներու ամփոփարաններն ու անոնց վրայի գրութիւնները: Ս. Խաչափայտի գրութիւնն է. «Եղաւ(ի) սմա փայտն կենաց, որ զՔրիստոս պողարեբեաց վասն կենաց աշխարհի. դարձեալ եւ յայտնի է ի Սոկրատ գրոց պատմութենէ որ Ս. Լուսաւորիչ տարաւ ի Տարօն գտուրը նշխարք մեծի Մկրտչին... եւ եզ անդ... եւ մասն ինչ ընկալաւ ի վայելումն անձին իւրոյ եւ երբ ի գաւառն Եկեղեաց ի գիւղն Խախ, շինեաց գեկեղեցի եւ եզ անդ: Ի թվ. ՉԻԱ... ի ժամանակն արքեպիսկոպոսին տեառն Սարգսի նախնոյն իմոյ յայտնեցաւ ի ձեռն միայնակեցի միոյ եւ եղեալ էր ի տուփ ոսկի եւ այն ի յարձաթի եւ եղեալ ի մարմար եւ էր գրեալ անուն սրբոյն եւ բազում փրկութիւն եղեւ ի յայտնել, նաև եւ մեղուցեալ արքեպիսկոպոս տէր Ներսէս շինեցի զսա եւ զլուսատու նշխարքս եզի ի սմա. բարեխօս առ Քրիստոս Աստուած ի թողութիւն յանցանայ իմոց

եւ ի զարգ սուրբ ուխտին Տիրաչինին առաքելական աթոռոյն թվ. ՉԻ [Գ]» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 293. Բիւզանդիոն, 1901, Թ. 1446):

Երզնկայի երբեմնի առաջնորդը Իսահակ Ամասիացին Տիրաչէնի մէջ տեսած է Ս. Ներսէսի Աջին պահարանը հետեւեալ գրութեամբ. «Չարդարեցաւ շնորհարաչխ բազուկ աջոյ սրբոյն Ներսէսի հրամանաւ արքեպիսկոպոսին Տեառն Սարգսի եւ պարոն Յովհաննէսի, մնալ միշտ ի փառազարգ տաճարն Աստուծոյ սուրբ Փրկիչ ի վայելումն աստուածապարգեւ զաւակացն իւրեանց Ներսէսի եւ Գրիգորի(սի) կատարեցաւ ի թուին ՉԻԲ» (Երեւակ, Ը., 1860, էջ 360, հմմտ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 294, քիչ մը տարբեր է ընթերցուածը):

Տիրաչէն կոչուած է այս վանքը իբրև թէ նախապէս Տիրան թագաւորէն շինուած ըլլայ. կը թուի թէ նախնական կամ առաջին անունն եղած ըլլայ՝ Խաչկայ վանք: Պարեան Խաչկայ վանքն ու Տիրաչէն (այս է Ս. Ներսէսի վանքը) երկու տարբեր վանքեր կը միտի ընդունելու (հմմտ. Խաչկայ վանք, Բիւզանդիոն, 1902, Թ. 1614): Տիրաչէն (կամ Տիրանաչէն) կը ստանայ նաև անունը Ս. Ներսէսի, երբ մեծ հայրապետին մասունքները գտնուելով ԺԳ. դարուն հոս կը փոխադրուին (Սոփերք է. Բ., Պատմութիւն Ս. Ներսէսի Պարթևի, Վենետիկ 1853, էջ 33—78. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 100. Բիւզանդիոն, 1901, Թ. 1446. Երեւակ, 1860, էջ 395 եւ Ալիշան, Յուշիկը Հայրենեաց, Բ., էջ 468): Ս. Ներսէսի նշխարներու գիւտը կ'ըլլայ 1275ին. «յորում էին ի ծննդենէն Քրիստոսի ամք հազար երկերիւր եւ թանասուն եւ հինգ» (Սոփերք է., էջ 44): Եւ Սարգիս եպիսկոպոսն անոր բազուկը կը դնէ «ի հոգևանուն եւ ի գեղեցկաչէն սուրբ ուխտն Տիրաչէնին» (անդ, էջ 64—65):

Քանի որ այս վանքը տիրանաչէն²⁷ է, այս է Տիրան Բ. արքայէն շինուած, հետեւաբար Հայաստանի հին վանքերէն է, սակայն իրականին միջին դարու հաստատութիւն մըն է: Հաւանականաբար դեռ այնքան

²⁶ «Տաճարին հարաւակողման պատին մէջ կ'ըլլէր դուռ մը, որ կ'առաջնորդէ անձկագոյն միջին ու գիւղին անցք մը, որ կ'անուանուի Գերեզման սուրբ Ներսէսի, արդարեւ հոն կայ ի ձախակողմն պատին մէջ գետեղուած տապան մը, որ ունի գրեթէ անթիւնելի արձանագիր, ծածկեալ է շուրջաւոր եւ կանթեղ լուցեալ ի վերայ» (Արեւել. Մամուլ, 1888, էջ 50):

²⁷ Հ. Ալիշան կը գրէ. «Այս վանքս սլլ (Տիրաչէն) Եզնկայի մօտ նշանաւոր վանքերէն մէկն է, ոմանք համարին, թէ «Տիրան թագաւորը շինած ըլլայ իր անուամբ մի գեղ, յորում յետոյ վանքն է շինուելը» (Հայաստան, Գ., էջ 113): — Տիրաչէն անուն գիւղ մը կայ Եկեղեաց գաւառի մէջ (Ալիշան, Կամենից, էջ 200):

հին շէր, երբ Սարգիս եպիսկոպոսը Ս. Ներսէսի մասունքները այդ գեղեցկաչէն վանքին մէջ, որ արդէն հոչակ ունէր, կը փոխադրէր: Հոն՝ 1302ին Կարապետ կրօնաւոր՝ «... յանապատիս, որ կոչի Տիրաչէն... յառաջնորդութեան զաւառիս Եկեղեաց Տեառն Ներսէսի թոռն տէր Սարգսին» Ղուկաս քահանային խնդրանքին վրայ Աւետարան մը կը գրէ (Հանդ. Ամս., 1924, էջ 516): Քանի մը տարի յետոյ 1310ին. «Գրեցաւ Գանձատեարս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ կենսաբեր սուրբ Նշանիս ի Տիրաչէն» ի ձեռն Կարապետի (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2061):

«Բաղմամիչը եւ ծանրամեղ ոգի» Գրիգորիս կը սնանի ու կը զարգանայ, նմանապէս կը կրօնաւորուի «ի մեծահոգև վանքն» Տիրաչէն, ուր եւ կ'ապրին ու կ'արդիւնաւորուին Մխիթար եւ Կոստանդին Երզնկացիները (Ալիշան, Հայաստան, Գ., էջ 113 եւ նոյնը՝ Սիսական, էջ 137. Պոտուրեան Հ. Մ., Կոստանդին Երզնկացի, էջ 13—14. Հանդէս Ամսօրեայ, 1915, էջ 64—67): Հոս է, որ Գրիգոր 1366ին Ներսէս քահանայի համար Գանձարան մը կ'արտագրէ (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երեւան, Թ. 371): Դարձեալ 1386ին՝ «յաստուածապահ քաղաքս Եզնկայ ընդ հովանեաւ սուրբ եւ երկնաման տաճարիս կաթողիկէիս եւ սուրբ աջոյ Տեառն Ներսէսի...» ժողովածու մը կ'արտագրուի (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 557. հմմտ. Կարենեանց, Յուշ. հայ. Չեռ. էջմ., Թ. 483):

Կարեւոր տեղեկութիւններ կան հետեւեալ յիշատակագրութեան մէջ. «Կատարեցաւ վեցհարիւրեակ սուրբ հաւրն Եւագրեա ձեռամբ Մովսէս քահանայի ի գաւառիս Եկեղեաց ի քաղաքիս, որ կոչի Եզնկայ ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս...: Այլ գիս զՅովաննէս նուաստ հոգի ստացող այսմ հոգեւոր մասնիս արեւելեան գաւառէն, որ կոչի Գեղարքունի, ի գեղչէն, որ կոչի Վարդենիս, աղաչեմ յիշել ի Տէր եւ զճնոգան իմ զհայրն իմ զԵլուկն եւ զմայրն իմ զՇնոհոսր տիկինն եւ զեղբարսն եւ զքորսն...: Գրեցաւ ի թվիս ՊԽ (1391) ի Սեպտեմ(բեր)ի Լ. տանուաչէն Կշիւն: Ես Յովաննէս կոչեցայ յաստիճան քահանայութեան ի տէր Գրիգորէ յարհիպիսկոպոսէ վերադիտողի Եկեղեաց գաւառի, յորդոյ պարոն Պեկթամուրին, զոր Տէր Աստուած պահեսցէ զնա եւ զհարազատ

եղբայրն իւր զպարոն Յովաննէսն եւ զպարոն Պեկթամուրն զաստուածապարգեւ զաւակն իւր... ի թվ. ՊԽ ի Նաւասարդի ԺԳ. եւ դեկտեմբերի ԻԶ ի տաւնի մեծ մարգարէին Դաւթի եւ սուրբ Առաքելոյն Յակոբոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ սուրբ Ստեփաննոս Նախափային եւ նշխարաց սրբոյն Ներսէսի եղև ձեռնագրութիւնս մեր ի վանքս Տիրաչէն կոչեցեալ, տանուաչէր կշիւն էր տարւոյն» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 1980, Հաւաքածոյ. հմմտ. Կարենեան, Յուշ. հայ. Չեռ. էջմ. Թ. 1939):

Տիրաչէնի մէջ Աստուածատուր 1465ին Մաշտոց մը կը գրէ (Նօտարք, էջ 22—23): Քանի մը անգամ այս վանքը աւերուծի կ'ենթարկուի, բայց կը վերանորոգուի Կարապետ Վ. Կոթի եւ Աւետիք Եւզոկիացի պատրիարքի ձեռքով (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 359. Բիւզանդիոն, 1902, Թ. 1614): Առաջինը որ հաւանաբար տեսած ըլլայ Տիրաչէնի երկարամեայ առաջնորդը՝ Կարապետ Թուրքուրանցին, իրեն նախանձորդ կ'ունենայ Մինաս վարդապետը (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 352—360 եւ Ակինեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա 1927, էջ 209):

Նորագոյն շրջաններուն՝ 1853ին Սահակ Ամասիացին հոն Եպիփան Կիւրացիին ճանորդ կ'արտագրէ (Տաշեան, Մայր Յուշ. Չեռ. Մխիթ. Վիենն., էջ 107): Իսկ Հմայեակ Դիմաքսեան եպիսկոպոսը Վարժարան մը կը բանայ (Արեւելեան Մամուլ, 1888, էջ 52—53 եւ Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 92 եւ 129):

Տիրաչէն եղած է Երզնկայի առաջնորդներէն շատերուն բնակավայրը: Ունեցած է ձեռագիր, մասունք, շարժուն եւ անշարժ հարստութիւն (Տիրաչէնի մասին հմմտ. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 100. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, էջ 294. Բիւզանդիոն, 1897, Թ. 317, 1898, Թ. 660, 1901, Թ. 1446, 1902, Թ. 1614. Արեւելք, 1887, Թ. 1126, 1140. Արեւելեան Մամուլ, 1884, էջ 66, 1888, էջ 51. Հայրենիք, Կ. Պ. 1887, էջ 51. Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 92—93. հմմտ. եւ Թուրքիեան Գ., Եփրատեան Հայաստան, Քղի եւ շրջ. գաւառները, Ա. հար., Փարիզ 1947, էջ 159):

31. ՓՈՐՁԱՎԱՆՔ

Երզնկայի Ղազիջան կամ Գուզուլջան գիւղին մէջ, շատոնց շարաթացած (Բիւզանդիոն, 1900, Թ. 1083, 1902, Թ. 1614):

32. ԲԱՌԱՍՈՒՆ ԽԱՉԵՐ ՎԱՆՔԸ

Երզնկայի հարաւային կողմը: Վարուց շարաթացած եւ աննշան: Սիւրմէնեան կը գրէ՝ «Սընգոր լեռան ստորոտը, Տրապիզոնի ճամբուն եզերքը, միւշիւր Չէքի փաշայի ամասոնային դղեակին մօտը եկեղեցի մը եւ հինէն մնացած գերեզմանաքարեր կային» (Երզնկա, էջ 104, հմմտ. գեո՝ Արեւել. Մամուլ, 1890, էջ 75. Ղազանճեան, Սառն Նամակներ, էջ 26 եւ Բիւզանդիոն, 1898, Թ. 351, 1900, Թ. 1049, 1901, Թ. 1538):

33. ԲՐԻՍՏԱՓՈՐԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի եւ Տաճրակի միջեւ, Պրաստիկ գիւղի հարաւ-արեւմտեան կողմը: Երբեմնի տաճարը կամարակապ եւ քարաշէն: Ծարաթացած: Եկեղեցւոյն սրբատաշ քարերու մէկ մասը գործածուած է Եփրատի վրայ ձուլուած կամուրջի մը (Բիւզանդիոն, 1898, Թ. 351 եւ 1902, Թ. 1614. Ղազանճեան, Սառն Նամակներ, էջ 26. Արեւել. Մամուլ, 1890, էջ 77 եւ 1891, էջ 209):

34. Ս. ՕԳՍԵՆՏԻ ՎԱՆՔԸ ԿԱՄ Ս. ՕԳՍԵՆՏԻՈՍԻ ՎԱՆՔԸ

Երզնկայէն երեք չորս ժամ հեռու: Կարմրի գիւղի մէջ: Հաւանօրէն երկու եկեղեցի ունեցած: Անոր մօտ է Նանդի վանքը կոչուած արտը (Բիւզանդիոն, 1898, Թ. 351 եւ 1902, Թ. 1644. հմմտ. եւ վերը):

(Շարունակիլի): Է. Է. ՈՍԿԵԱՆ

ՏԵՂԵԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՈՉՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՂՐԵՐԳ

(Շարունակուելիս):

Թովմաս Մեծուիեցւոյ Աւնիկի գրաւումի մասին համառօտ յիշատակութիւնը եթէ լրացնենք Շերեֆեղդինի մանրամասն նկարագրութեամբ, կ'ունենանք հետեւեալ հաստատուն իրողութիւնը՝ թէ Աւնիկ նոյն է Հասանկալէի հետ եւ ոչ մի առնչութիւն ունի արդի Աւնիկ բերդին հետ:

Վերն յիշատակեցինք թէ Լենկթիմուրի արշաւանքները տեղի ունեցած են Բայազիդ-Ալաշկերտ-Հասանկալէ-Կարին ուղեգծով. արդ Շերեֆեղդինի տեղեկութիւնները լիապէս կը հաւաստեն այդ բանը Բէօսէղաղի՝ Սուկաւ լեռան, յատկանշական յիշատակութեամբ: Թիմուր Ալաշկերտէն Բէօսէղաղի անցքէն կը դիմէ Աւնիկ = Հասանկալէ երկու օրէն, ճիշդ այն դժով, որով արդի կարաւանի եւ նաեւ ռազմագիտական ճանապարհը կ'անցնի: Ալաշկերտ-Բէօսէղաղ-Սմրազոմ-Չորանքէօի բերդ-Հասանկալէ հեռաւորութիւնն ըստ զօրավար Գարդանի³⁴ երեւոյն ժամ է կամ երկու օր:

Իսկ այժմեան Աւնիկի մօտէն կամ ստորոտէն չ'անցնիր ընդարձակ ուղի մը, ուսկից կարող ըլլային կարաւաններ եւ բազմաբոխ բանակներ երթեւեկել. կայ այդ՝ արահետ մը, ուսկից անցնելու համար հարկ էր տեղ տեղ նոյն իսկ մազլեւել, ինչպէս Կոխի նկարագրութեանէն այնքան պայծառ կը տեսնուի: Յետոյ ո՛ւր կարելի էր այդ աշխարհաժողով բանակներու, նախարարներու եւ արքունի տան բովանդակ բազմութիւնը պարփակել արդի Աւնիկի ցից դարաւանդներու վրայ: Մինչդեռ Բասենի ընդարձակ եւ համատարած դաշտն եւ Հասանկալէի քաղաքին եւ բլուրին լայն հարթավայրերն ամէն տեսակէտով ձեռնառու են այդպիսի հոծ բազմութիւն մը իր մէջ ամփոփելու եւ նաեւ բերաւոր բանակներու խնձոյքի եւ աշխարհաժողով հանդէսներու յարմարագոյն վայր մ'ընծայելու: Արդի բերդը կարաւանի ուղիէն բոլորովին մեկուսի կը գտնուի, մինչ Շերեֆեղդինի Աւնիկը շարունակ թիմուրի արշաւանքներուն գլխաւոր անցուղարձի հան-

³⁴ A. de Gardane, Journal d'un voyage dans la Turquie d'Asie et la Perse, 1807-1808, Paris et Marseilles, 1809 թարգմ. Յ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, հատոր 2. էջ 88-135, հմմտ էջ 98-99:

դոյցը կը կազմէր, եւ իրբեւ այդպիսի միայն ու միայն Հասանկալէն կարող է ըլլալ:

Այս նոյնութեան ի նպաստ ունինք աւելի կանխադոյն ժամանակներէ վկայութիւններ, որոնցմէ՝ կարեւորագոյնները կը փութանք այստեղ յառաջ բերել:

Շերեֆեղդինէն երկու տասնեակ տարիներ յառաջ զրի առած է սպանիացի նշանաւոր ուղեգիր մը՝ Ռույ Գոնզալեց գի Կլաւի-խոյ³⁵, իր ուղեգրութիւնը դէպի Սամարղանդ, Լենկթիմուրի արքունիքը: Այն ուղին, զոր նա այնքան մանրամասն եւ ճշգրիտ կը նկարագրէ, կը կազմէ արդի կարաւանի գիծը՝ Տրապիզոն-Երզնկա-Երզրում-Աւնիկ-Մակու-Ույ եւն: Հասանկալէէն դէպի Պարսկաստան երկու ուղիներ կան. մին Բէօսէղաղ-Քէօյ-Ալաշկերտ-Բայազիդ-Պարսկաստան, միւրը՝ ինչպէս Բոթուր³⁶ կը նկարագրէ «Հասանկալէէն-Պարսկաստան գիծը կ'ուղուի դէպի արեւելք Երասխի ձախ ափին երկայնքին՝ կը հասնի մինչեւ Ախուրեան-Երասխ խառնուրդը՝ Բայրամլու բերդը եւ ապա էջմիածին-Երեւան-Պարսկաստան: Կլաւիխոյ Երզրումէն Սամարղանդ ուղեւորութեան այս վերջին ուղին ընտրած է գէթ մինչեւ Բայրամլու-Կողը եւ ապա Իզդիլ-Բայազիդ-Մակու: Վերադարձին կտրած է Ույ-Դիաղին-Ալաշկերտ-Հասանկալէ գիծը:

Կլաւիխոյի գործին Հայաստանի վերաբերուած մասերը թարգմանուած են Յ. Յակոբեանի կողմէ «Աղբիւրներ Հայաստանի եւ Անդրկովկասի Պատմութեան, Ուղեգրութիւններ Ա. հատորի մէջ, Երեւան 1932, էջ 65-146: Յառաջ կը բերենք մեր նիւթին հայող կտորները:

«Յաջորդ օրը Հինգշաբթի մայիսի 22ին մեկնելով Երզրումից, մենք զիշերեցինք

³⁵ Ruy Gonzalez de Clavijo, Historia del gran Tamerlan, e itinerario, Seville, 1583. Անգղերէն թարգմ. Embassy to Temerlane, 1403-1406, trans. from the Spanish by Guy Le Strange with an Introduction, London, 1928. Հայերէն թարգմ. Յ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, հատոր Ա. Երեւան 1932, էջ 63-146, հանդերձ ծանօթութիւններով:

³⁶ Felix de Beaujour, Voyage Militaire dans l'Empire Othoman, Tome II. Paris 1892 p. 89. La route de la Perse se dirige à l'est, et côtoyant l'Araxe sur sa rive gauche jusqua son confluent avec l'Harpazous, vers le fort de Bairamlou, elle s'élève par le monastère de l'Ekmiazin jusqua la forteresse d'Erivan, ou bien laissant à gauche cette forteresse elle va passer le Zirma vers les ruines d'Artaxate, et descend avec l'Araxe jusqu'au fort d'Abas-Abad, audessous de Nakchivan etc.

Պարթիւր Ջաւան (Partir Javan) գիւղում, որ գտնուում է Աւնիկ քաղաքի սահմանում³⁷: Այս վերջինը մի շատ զօրաւոր վայր է, ունենալով իր յատուկ կառավարիչը որովհետեւ դա հայերի ձեռքումն է, բայց չըջակայ հողամասերը պատկանում են մի Չաղաթապաղուականի, որի անունն է Դուլաղէյ Բեկ (որի մասին պիտի խօսենք վերջէն): Ուրբաթ օրը մենք եկանք մի գիւղ Իսչու (Ischu)³⁸ կոչուած, մենք այստեղ մնացինք այդ գիւղեր, ինչպէս նաեւ ամբողջ շաբաթ օրը. գիւղացիները հայեր էին: Կիրակի շաբաթը անակնելով հասանք մի տեղ Դեւլիբեքենդ³⁹ կոչուած, մի անուն՝ որ նշանակում է խենթերի գիւղ, որովհետեւ այս գիւղը բնակողները բոլորն էլ իսլամ հաւատքին պատկանող ճշնաւորներ են, որոնք այստեղ քաշիչ անունը ունին»: ... (Այս գերովիշներու նկարագրութիւնը կու տայ մանրամասն եւ ազգա կը շարունակէ:)

³⁷ Թէ Le Strange եւ թէ Յ. Յակոբեան իրենց ծանօթագրութիւններու մէջ (անդ, էջ 118) Պարթիւր Ջաւան կը նշանակեն Հասանկալէի հետ, այն պատճառարանով թէ թուրքերը զայն կոչած են Ջիւան կալէսի: Սակայն այս առթիւ բնաւ նկատի չեն առնել Կլաւիխոյի ուղեգիրն նկարագրութիւնն ու ընթացքը, ուսկից յայտնապէս կը տեսնուի թէ Կլաւիխոյ Հասանկալէն կոչած է միւշա Աւնիկ, հետեւաբար Պարթիւր Ջաւան գիւղը պէտք է այլուր որոնել: Եւ քանի որ նշանաւոր ուղեգիրն համեմատ այս գիւղը Աւնիկի սահմանում գտնուած է, մեզ կը թուի թէ այդ անունան աճեցածներու հնչուիչը կը ներկայացնէ արդի Պատիճիւր կամ Պատիճիւր գիւղը, որ իրապէս Հասանկալէ քաղաքին սահմանում կը գտնուի եւ Կարաւանի ճանապարհին վրայ Բէօսէղաղ-Քէօյի մօտերը, Հասանկալէէն հարկ մի քանի մղոն հեռու:

³⁸ Յակոբեան (անդ, էջ 119) կը կարգուց իսչու, եւ կը նշանակէ Իլիջայի հետ «տաք հանքային ջուր, որ գտնուում է այդ մասերում»: Համարաւոր Իլիջան Կարնոյ արեւմտեան կողմն է. ամէն պարագային Յակոբեան զայն իր աչքին առջեւ չ'ունի, սակայն այս անունով յատուկ տեղոյ անուն մը Բասենի մէջ մեզ ծանօթ է: Բէօսէղաղ-Քէօյի մօտակայքը թէեւ կը գտնուի հանքային ջուր մը, սակայն չենք կարող ոչ հնչական տեսակէտէ եւ ոչ ալ աշխարհագրօրէն միացնել Կլաւիխոյի իսչուին հետ: Վերջինս ըստ Ուղեգիրն Պատիճիւրէն միօրեայ հեռաւորութիւն մը պիտի ունենայ, ուստի հաւանաբար արդի Ազարի մօտերը պէտք է գտնուի: Այլեւսին համեմատ Ազարի մօտ կայ (հմմտէ Այրարատ, էջ 32) Իսչի-սու գետակ մը եւ գիւղ մը:

³⁹ Ստրանջ եւ Յակոբեան (անդ էջ 119) հարպուրում արտաքին նմանութենէն Դեւլի-Բարայի եւ Դեւլիբեքենդի համարած են նոյն: Սակայն վերջինս ըստ նկարագրութեան Կլաւիխոյի պէտք է որ Երասխի ձախ ափին գտնուի, որովհետեւ Դեւլիբեքենդէ մեկնելէն յետոյ է որ առաջին անգամ Երասխ գետին կը հանդիպին ուղեւորները: «Մենք թողինք Դեւլիբեքենդը եւ զիշերեցինք քաջօթեայ, հասած լինելով մի մեծ գետի գիւղերեցինք քաջօթեայ, հասած լինելով մի մեծ գետի կերպը, որ կոչուում է Արազ (Արաքս)»: Դեւլի-Բարա կը գտնուի Երասխի աջափողմը, որ հասնելու համար անհրաժեշտ էր որ գետն անցնէին: Դեւլիբեքենդը հաւանաբար անհետացած է պատմութեան ասպարէզէն տեղի տալով նոր տեղանունի մը: